



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Երեւոյն Եկեղեցւոյ Ե-ի
Կեանքացոյցս իւրեանք

Ըստ Ա. Բ. Գ.

1877.

ԱԵՐԵՐ

429, 533, 536



Սերեր

429

Ն Ի Ի Թ Ե Բ

Ն Ե Բ Ս Է Ս Ե Ի

Կ Ե Ն Ս Ա Գ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Բ

Ա

Ժողովեաց

Ա Ղ Է Ք Ս Ա Ն Դ Բ Ե Բ Ի Ց Ե Ա Ն Ց



ТИФЛИСЪ

Типографія Амбарцума Энциаджянца и К-о.

1877

Handwritten blue mark

Handwritten blue mark

Handwritten blue mark

530



Ն Ի Ի Թ Ե Ր

ՆԵՐՍԷՍ Ե-Ի

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Է Ա Մ Ա Ր

Վաղուց ի վեր եւ ժողովում եմ երջանկայիշատակ Ներսէս Ե կաթողիկոսի կենսագրութեան վերաբերեալ զբաւոր և բերանացի յիշատակները և հետզհետէ աւելի և աւելի համոզվում, որ տակաւին վաղ է այդ ~~Տէ~~ ~~Տարրու~~ լիակատար կենսագրութեան երևան հանելը, որովհետև շատերը նորա գործակից և հակառակորդ անձերից այսօր կենդանի են: Թողնելով ապագային և մի քանիքարաւոր զբնայդ կենսագրութիւնը պատրաստելու, այժմ աւելորդ չհամարեցի աւանդել տպագրութեանը իմ ունեցած և զիտեցած տեղեկութիւնները Ներսիսի կեանքի մասին: Այս գործի մէջ զխաւորապէս ինձ նպատած են իւրեանց մօտ գտնուած տեղեկութիւններովը մեծ. պ. պ. Գալուստ Շերմազան-Վարդանեանը և Յարութիւն Շահազիզեան — Կամսարականը: Այս նիւթերի մասին մի քանի խօսք:

Պ. Գ. Շերմազան-Վարդանեանը, որոյ հանգուցեալ հայրը՝ աղա Յարութիւնը՝ Ներսիսի մտերիմ բարեկամն էր, բարեպատեհ առիթ է ունեցել արտազրել և ժողովել Ներսիսի թղթերը և մօտ 24 բաղմաթերթ տետրակներ է կազմած. սակայն այս թանգուղին ժողովածուն 1865-ին Թիֆլիսի մէջ տեղի ունեցած անկարգութեան ժամանակ զրգուած ամբոխի ձեռքով ոչնչացաւ, անբուժելի ցաւ պատճառելով հայ զբաղմունի թեան... Միմիայն պատահական կերպով ազատուած է այդ 24 տետրակներից մէկը, որ իւր մէջ բովանդակում է Ներսիսի թղթերի մօտ 400 պատճէնները 1801—1834 թուականներին վերաբերեալ: Թէ ինչ էր միւս 23 տետրակների բովանդակութիւնը՝ մեզ յայտնի չէ: Պ. Շերմազանեանի զրքատան կորուստը աւելի զգալի է մանաւանդ այն պատճառով, որ Ներսիսի

Дозволеною Цензурою. Тифлисъ. 13-го марта 1877 года.



429-2009

(4288)
41

426

1877

բուն թղթերը, զետեղուած լինելով քանի մի սնդուկներէ մէջ, Մատթէոս կաթողիկոսի հրամանով Եջմիածնի վեհարանում վարանի մէջ են ածվում և հրոյ ճարակ լինում.....: Պ. Շերմազան-Վարդանանք, բացի վերոյիշեալ տետրակից, բարեմտաբար չէ խնայած ինձանից և քանի մի այլ գրաւոր և բերանացի նիւթեր Ներսիսի վերաբերութեամբ:

Ներսիսի գրութեանց պատճէններէ կրկնորդ հարուստ ժողովածուն գտնվում է պ. Յարութիւն Շահաղեղեան-Վամսարականի մօտ, որ հայրապետի եղբորորդին է: Այս պարոնի մօտ գտնուածների մեծ մասը վերաբերում է 1843—1857 թուականների անցքերին և շատ մեծ լոյս է տարածում այդ ժամանակամիջոցի պատմութեան վերայ: Յարգոյ պարոնը այդ նիւթերից մի մասը ուղարկած էր և տպած Պօլոյ «Մասիս» լրագրի մէջ (1875 թուի 1694 համարից սկսած) և ներկայումս առաջարկած է ինձ իւր օգնութիւնը և ունեցած տեղեկութիւնները:

Բացի սոցանից՝ ես ստացած ունիմ զանազան նիւթեր այս գործի վերաբերութեամբ և քանի մի այլ պարոններից, որոնց անունները իւր տեղը կ' յիշուին և որոնց ընդհանրապէս իմ խորին շնորհակալութիւնը յայտնում եմ:

Սակայն այս քե՛ծ անձի գործունէութիւնը այնքան ընդարձակ է և հարուստ, որ կարծում եմ թէ նորա գործքերի շատ և շատ իրողութիւնները տակաւին անյայտ են ինձ. և արդարեւ՝ լսում եմ որ Երևանի դաւառում քանի մի անձանց մօտ գտնվում են այնպիսի գրութիւններ, որոնք միանգամայն ինձ անծանօթ են: Այս գործին ձեռնամուխ լինելով և ահա ներկայումս մի փոքրիկ ճաշակ տալով—հաւատացած եմ որ այն ամեն պարոնները, որոնց համար թանգ է Ներսիսի անունը, չեն խնայել հաղորդել ինձ իւրեանց մօտ գտնուած նիւթերի պատճէնները:

Ա.

ՆԵՐՍԻՍԻ ՏՈՂՄԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Երբ մէկը Ներսէս Ե-ի կենսազրութեան վրայ ճիշտ տեղեկութիւններ ուզենար ստանալ, առաջին դժուարութիւնը որին պիտի հանդիպէր նա՝ Ներսիսի տոհմաբանութիւնն է: Յայտնի է, որ

մահմէտական տէրութիւնները միշտ հետևած են ռամկապետական այն սկզբունքին, որ չեն ընդունում անհատների պատմական ազնուապետականութիւնը և այդպէսով զոնեա մասամբ ճանապարհ են բաց անում ամենքին իւրեանց անձնական ընդունակութեան համեմատ յառաջ գնալ որ և իցէ կենսական ասպարիզի մէջ: Պարսից տէրութիւնը մինչև անգամ բունի մոռացնել էր տալիս մեր հին նախարարաց սերունդներին իւրեանց պատմական ծագումը և համաձայն մահմէտական սովորութեան՝ թոյլ էր տալիս կրել միմիայն հօր անունը: Այսպէս՝ տոհմերի ազդանունները ժամանակի հետ մոռացման տրուեցան, և այսօրուան օրս միանգամայն անկարելի է որ և իցէ հայ զերդաստանի ծագումն պատմաբանօրէն կապել զոնեա Բագրատունեաց հարստութեան մէջ փայլող այս ինչ կամ այն ինչ հայ իշխանի անուան հետ: Չընայելով այս անկարելիութեանը՝ Եջմիածնի միաբանութիւնը Կանիէլ և Եփրեմ կաթողիկոսաց, 10 եպիսկոպոսաց, 2 վարդապետաց, 2 աւագ քահանայից և 5 մելիքաց ստորագրութեամբ 1808 թուի յուլիսի 20ին մի վկայագիր է տալիս Ներսիսի եղբորը՝ Կարապետ Շահաղեղեանին, որի մէջ իբր թէ պատմական ապացոյցներով հաստատում է Կարապետի (ուրեմն և սորա աւագ եղբոր՝ Ներսիսի) հին Կամսարական նախարարների սերունդից ծագումն ունենալը: ¹⁾

¹⁾ Այս բուն վկայագիրը գտնվում է Ներսիսի եղբորորդու պ. Յարութիւն Կարապետեան Շահաղեղեան-Վամսարականի մօտ, Ռիֆլիզում: Ահա վկայագրի պատճէնը՝ «Սուրբ ժողովն Արարատեան ամբողջն Եջմիածնի ընկալաւ զինդիր Աշտարակեցի իշխանազարմ Կարապետին Տէր Յարութիւնեան վասն տալոյ զվկայութիւն ճամարիտ յազապ ազգատոհմութեան իւրեանց: Ուստի որպէս զիտեմք յաւանդութեանց նախնեաց, և որքան ինչ լուեալ եմք կամ տեսալ ՚ի ժամանակս մեր՝ վկայեմք, զի նախնի սոցա Ներսէս անուն եղեալ է երևելի իշխան ՚ի Շիրակաւան յազգէ Կամսարականաց. և ՚ի զօրանալ իշխանութեանն Թաթարաց ՚ի յԱնի, որդիք որդւոց նորա Մնացական և Թորոս նեղեալ ՚ի բունութենէ բարբարոս իշխողացն Անույ և սահմանաց նորա, թողուն զհայրենիս իւրեանց և գնան ՚ի Մայրազում կամ ՚ի Գոմաժոյ որ ՚ի Նիգ գաւառ և անդ բնակին ընդ երկար ժամանակս: Այլ յորժամ անողորմ բունութիւն բարբարոսաց առաւել ևս զօրանայ, ամենայն բնակիչք Նիգ գաւառին և այնց կողմանց փախուցեալ ցրուին ՚ի զանազան տեղիս. յայնժամ և երեք եղբարք յորդուցն Մնացականին եկեալ դէպ յԱրարատ տեսանեն զտեղի վայելուչ

Մամանապէս՝ երբ Ներսէսը 1814 թուին վիճակաւոր առաջնորդ էր ուղարկուած Թիֆլիս, Նիքիեմ կաթողիկոսը նորա մասին գրում է ուսուսաց Սինոդոսի Օբէր-պրօփուրօր իշխան Գօլիցինին և Կովկասի զօրքի հրամանատար Բոխչէկովին, որ Ներսէսը ծագումն ունի հայոց

« ՚ի վերայ Քարսաղ գետոյ յանդիման գեղջն Աշտարակու մերձ ՚ի հարա-
« ւային խելս կամրջին, և անդ առնեն իւրեանց զընակութիւն. և վասն
« զօրանալոյ իշխանութեանն օտարահաւատից՝ լաւ համարեալ մտանել ընդ
« հովանաւորութեամբ այլազգի իշխողաց, երէց որդին՝ որոյ անունն էր
« Մարգար, գնայ առ Ջահան շահն, որ նստէր ՚ի Գարէժ, և խնդրէ ծա-
« ւայել ՚ի զրան նորա, և իւրով հաւատարմութեամբն և արիութեամբ
« այնքան լինի հաճելի, մինչև ՚ի բաց թողեալ զանունն Մարգար, կռնն
« գնա Շահազիդ: Երկրորդ եղբայրն նորա թորոս անուն մտանէ ՚ի ծառա-
« յութիւն Երեանայ իշխանին, որոյ անունն Եսդուպ, և նա անդէն ևս զը-
« տանէ զպատիւ և լինի սիրեցեալ յազուպայ մինչև զնորա ևս թողեալ
« զանունն՝ կռնն գնա իբրև յատկացեալ անուամբ Խանզուլի, որ և այս
« Խանզուլի փոխադրեալ զընակութիւն և զընտանիս իւրեանց յայնկոյս գե-
« տոյն ՚ի զիւզն Աշտարակ, որ յայնժամ լինի փոքրիկ ազարակ մի, և կար-
« զեալ ՚ի վերայ պաշտպանութեան տան և ընտանեաց իւրեանց զիւրքը
« եղբայրն իւրեանց Գրիգոր անուն, ինքեանք մնան ՚ի ծառայութեան իւ-
« րեանց զամս բաղումս, և վասն այսր փոխադրութեան մինչև զայսօր
« ժամանակի սերունդք երկից եղբայր նոցա յանուն փոխադրողին իւրեանց
« անդէն յԱշտարակ՝ Խանզուլիք ասին: Իսկ զինի ընդ երկար ծառայու-
« թեան երեք եղբարքն ևս գան ժողովին առ ընտանիս իւրեանց յԱշտա-
« րակ և ըստ չափու տանելութեան գեղջն լայնացուցանեն զընակութիւն
« իւրեանց և ստանան զանդս և զայգիս և զայլ ստացուածս, և յատկա-
« ցուցանեն ինքեանց զգերեզմանատուն յատուկ ՚ի զուլս այգուոյն եզելոյ
« առ զրան սլալատան իւրեանց: Եւ յայնմհետէ օր ըստ օրէ ժողովեալ
« անդէն բաղմութիւնք ազատաց և ուսմկաց մեծացուցանեն զզիւզն՝ մինչև
« լինիլ զիւզաքաղաք, ուր և որդիք յիշեալ եղբայրն երեկի ևն ազգաւ
« մինչև զայսօր ժամանակի, երբեմն մինն և երբեմն միւսն, երբեմն յոյժ
« ընդարձակութեամբ և երբեմն սակաւ ըստ ժամանակի զանազանութեանցն
« երեկի հանդիսանային իւրեանց ազգատոհմի իշխանական ճօխու-
« թեամբն, որոց բաղմացն և մեք և ձերունիք մեր ականատես եմք եղև-
« լոցն յաւուրս մեր, և զիտեմք և վկայեմք, զի սոյն այս կարապետ Տէր
« Յարութիւնեան է յորդոցն Մարգար Շահազիդի, որդւոյ Մնացականի,
« որդւոյ Ներսիսի Կամարականի. վասնորոյ և ստորագրեմք: Յամի
« Տեսուն 1808, յամսեանն յուլիսի 20, ՚ի բարձրագոյն խորհրդարանս Սրբոյ
« Եջմիածնի:

«Գանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց և Կովալեր սրբոյ
Աննայի առաջնորդ աստիճանի:

հին և երեկել Կամարական նախարարութիւնից: 2) Նոյն Նիքիեմը այս ժամանակներում մի վկայական (ատեստատ) է տալիս Ներսիսին, որի մէջ նմանապէս կոչում է նորան Կամարական նախարարներից սեւրած. 3) Բուն վկայագիրը դանդում է դարձեալ պ. Յարութիւն Շահազիդեանի մօտ:

Ամենեւին չերկմտելով Շահազիդեանների կամ մեր ժամանա- կակից Կամարականների հին Կամարական նախարարներից ունեցած ծագման մասին, այնու ամենայնիւ պարտք ենք համարում այսպիսի նշանաւոր հանգամանքի մէջ ուշադրութիւն դարձնել քանի մի կէ- տերի վերայ և կուրօրէն հաւատ չընծայել Գանիէլ և Նիքիեմ կա- թողիկոսներից ստորագրած հինօրեայ աւանդութեանցը և պատ- մական, մեղ ամեն կերպ անյայտ, իրողութեանցը:

Պէտք է զիտենալ, որ մինչև ներկայ դարուս սկզբները, պար- սից ձեռքի տակ եղած հայերից ոչ ոք մտածած չէր ոչ միայն իւր պատմական ծագումով պարծենալ, այլև որ և իցէ զբաւոր վկայա- կան ձեռք բերել իբր ապացոյց իւր տոհմագրութեան: Թէ մէկը և թէ միւսը նշանակութիւն չէր ունենալ Պարսից առաջ, վասնորոյ և ոչ այդպիսի պահանջ կար: Անցեալ դարու վերջերին Արաց վեր-

«Կաթողիկոս և պատրիարք ամենայն Հայոց և Կովալեր սրբոյ Աննայի առաջնորդ աստիճանի. Նիքիեմ»:

(Եւս և ստորագրութիւնք 10 եպիսկոպոսաց, 2 վարդա- պետաց, 2 աւագ քահանայից, և 5 մելիքաց):

2) Իշխան Գօլիցինին և ժեներալ Բոխչէկովին դրած նամակները մի և նոյն բովանդակութիւնն ունին և դրած են մի և նոյն օրը, այն է 18ին փետրուարի 1814 թուի, Ս. Եջմիածնում և Նիքիեմ կաթողիկոսի ստորա- գրութիւնն են կրում: Առաջին նամակը տպուեցաւ Кавказская Старина ամ- սագրի մէջ (1873, № 3. Էր. 64—66), իսկ երկրորդը Акты Кавказской Ар- хеографической Комиссии հրատարակութեան հինգերորդ հատորի մէջ. (Էր. 437—441.): Երկու գրութեանց մէջ էլ հետեւեալ նշանաւոր կտորը կայ՝ « Նորին ազագաւ.....հարկադրեալ եղաք առաքել այժմ.....ՉՆերսէս « սրբազան արքեպիսկոպոս Տէր Յարութիւնեան Շահազիդեանց ՚ի պայա- « զատ սերնդոց երեկելի նախարարութեանց հայկազանց Կամարական կո- « չեցելոց.....»

3) Ներսիսին տուած վկայականի մէջ ասած է՝ «...և յայնեմք սոյն- « պէս, զի է սա պայազատ ՚ի սերականութենէ երեկելի նախարարու- « թեանցն Հայկազանց Կամարական կոչեցելոց.....» Այս վկայականը տը- պած է նմանապէս Պօլսոյ «Մասիս» լրագրի մէջ (1875 թի, № 1694.):

ջին թագաւորներները, ուսաց հրաւիրելով Վրաստան, մի ցուցակ ներկայացրին ուսաց տէրութեանը, խնդրելով որ այսինչ անձանց տոհմը իշխանանական համարէ, իսկ այսինչ անձանց — ազնուական: Ինչպէս յայտնի է՝ այն ժամանակները դեռ ևս իշխանական և ազնուական ծագումը մեծամեծ արտօնութիւններ էր տալիս, օրինակի համար՝ աղաս էր պահում հարկից, մարմնական պատիժներից, իրաւունք էր տալիս կալուածներ և ճորտեր գնելու, որդոցը տէրութեան ուսումնարանների մէջ կրթելու, տէրութեան պաշտօնեայ լինելու, չին (աստիճան) ստանալու, և այլն և այլն: Հակառակ սորա՝ ամենայն ոչ-ազնուական կրում էր այն ժամանակուայ ճոճիճ արհամարական անունը իւր բարոյական և նիւթական դառն հետեւանքներով: Վրաց տէրութիւնը իւր ազնուականներին ապահովացրեց այդ մասին ուսաց կայսեր հաստատութեամբը դեռ ևս այն ժամանակները, երբ ուսները պատրաստվում էին գալ Վրաստան: Այն վրացի իշխանների և ազնուականների շարքում կային և մի քանի վրաստանաբնակ հայ գերդաստաններ: Գործի մեծակշիռ օգուտները հասկանալով, այն ժամանակուայ ուստիաբնակ հայոց առաջնորդ Յովսէփ Արղութեանց արքեպիսկոպոսը Պետերբուրգում միջնորդեց իշխանութիւն և ազնուութիւն ձեռք բերելու դարձեալ քանի մի հայ գերդաստանների համար, որոնց մեծ մասը իւր ազգականներն էին: Որքան փառասէր, այնքան և քաջ գործունեայ, Յովսէփ արհին իւր ազգատոհմի մասին ևս կայսերական հրովարտակ ձեռք բերաւ, որի մէջ Արղութեանց տոհմը Բագրատունեաց թագաւորական ցեղից սերած և Զաքարիա Սպասալարի շառաւիղ է համարուած: Ինքը Յովսէփը, վերջին ժամանակներում մինչև անգամ Ս. Գրիգոր Լուսաւորչի տոհմից էր կարծում իրան: Թէ այսպէս և թէ այնպէս, բայց վրաստանաբնակ հայերից շատերը Վրաց Հերակլ Բ և Գեորգի ԺԲ թագաւորների և կամ Յովսէփ արքեպիսկոպոսի վկայականներով ուսաց իշխան և ազնուական անուանեցան և վերոյիշեալ իրաւանց աէր եղան: Յովսէփ Արղութեանի արքայական ծագումը որքան և ծիծաղելի թուէր Եջմիածնեցոց, բայց դա իւր հետեւողները պիտի ունենար...

Երբ Վրաստանը կայսերական հրամանով 1801 թուին միացաւ Ռուսիայի հետ, այնուհետև Պարսկաստանի հայք ևս հաւատացած էին որ վաղ թէ ուշ ուսները Նրեանի գաւառն էլ պէտք է ձեռք բերեն, և այս հաւատով շատերը լսիկ մնջիկ իրանց պատրաստու-

թիւնը տեսնում էին: Գլխաւորապէս Արարատեան և Սիւնեաց երկրների մելիքները և քեթիւսուղաները Գանիէլ և Նփրեմ կաթողիկոսների ժամանակներում շտապեցին պարսիկ խաների և արքայազուհիների գրաւոր վկայութիւնները ձեռք բերել իւրեանց արած ծառայութեանց մասին և վայելած կալուածների քանակութեան և սահմանների վերաբերութեամբ: Սակայն Վրաստանի գլխաւոր հրամանատար իշխան Յիցիանովի ժամանակ պարզուեցաւ, որ խաների տուած վկայականները մեծ յարգ չունին ուսաց առաջև և թէ Եջմիածնի վկայութիւնը աւելի նախապատիւ է համարվում: Այն ժամանակ հեռատես հայք դարձան դէպի Եջմիածնի միաբանութիւնը իւրեանց ծագման մասին վկայականներ խնդրելով: Որքան պատահել է մեզ տեսնել այդպիսի վկայագրեր, նոքա բոլորն էլ տուած են 1807—1832 թուականների միջոցներին, ուրեմն Գանիէլի, Նփրեմի և Կարբեցու կաթողիկոսութեանց ժամանակը: Սակայն ո՞ր պատմական և դիւանական գրութեանց վերայ կարող էին հիմնուած լինիլ Եջմիածնի միաբանութեան տուած պատմական վկայագրերը, քանի որ սովորութիւն չէ եղած Եջմիածնի մէջ աշխարհականների տոհմագրութիւնն արձանագրելու և երբ այդ միջոցում վանքը այնպէս թալանած ու զուրկ էր ամենայն գրաւոր արձանագրութիւններից, որ հազիւ սուրբ տաճարի պատերն էին կանգուն մնացել: Այս այսպէս գիտենալով, աւելորդ չենք համարում առանձին ուշադրութիւն դարձնել, այն ևս միմիայն պատմական ճշտութեան կէտից, վերոյբերեալ վկայականի վերայ, որ տուած է Եջմիածնի միաբանութիւնը հանդուցեալ Կարապետ Տէր Յարութիւնեան Շահազիզեանին: Նախ այդ վկայագրի մէջ աչքի է ըկալում այն իրողութիւնը, որ Եջմիածինը և Նրեանը դեռ ևս պարսից տիրապետութեան տակ լինելով, յիշեալ Կարապետը, ընդդէմ ամենայն մինչև այնօրերը եղած սովորութեանց, հարկաւորութիւն է ունենում վանքի միաբանութեանը խնդիր տալու և վկայական ստանալու: Արդեօք ի՞նչ բանի համար էր հարկաւոր այդ վկայականը, քանի որ դա պարսից աչքում ամենեւին նշանակութիւն չպիտի ունենար: Բնական է կարծել, որ Կարապետը, դուրս հեռատես և քաղաքագէտ եղօր թելադրութեամբ, առաջուց պատրաստութիւն է տեսնում Ռուսաց ժամանակ ազնուականութիւն ձեռք բերելու: Ով որ ծանօթ է Ներսիսի գրութեանց ոճին, նա չի կարող խիոյն չիմանալ, որ վերոյբերեալ վկայականն էլ Ներսիսի գրած է, երբ սա Գանիէլին կաթողիկոսական

գահը ապահովացրած, արդէն բոլոր Եջմիածնի, ինչպէս ասում են, սանձը ձեռքին ունէր: Նոյն իսկ վկայագրի տակ ի թիւս տասն եպիսկոպոսաց ստորագրած է իւր բարեկամ Ռէթէոս եպիսկոպոսի շարքում և Ներսէս եպիսկոպոսը, որ եղբօր նախարարական ծագումն է հաստատում: Ներսիսի գրած այս վկայականի լեզուն կրկնվում է մեզ մնա դանուած մի այլ վկայագրի մէջ, որ նմանապէս գրած է Ներսէսը և սուած Գեղամեան տոհմին ⁴⁾

Երկրորդ նշանաւոր կէտը այն է, որ պատմական ճշտութիւնից խոյս տալու մտքով կարապետին սուած վկայագրի մէջ գործ է դրուած հետեւեալ պարբերութիւնը՝ «Ուստի որպէս զիտեմք յաւանդութեանց նախնեաց, և որքան ինչ լուեալեմք կամ տեսեալ ի ժամանակս մեր՝ վկայեմք... և այլն»: Տե՛սու ի ժամանակս Տերը մի կողմ թողնելով, որովհետև սա ժամանակակից անցքերին է վերաբերում, դուրս է գալիս որ նոյն իսկ Եջմիածնեցոց խոստովանութեամբ վկայագրի բոլոր պատմական մասը, որ ամենազլխաւորն է, հիմնվում է միմայն որպէս զիտեմք յաւանդութեանց նախնեաց» և զուեալեմք մէջ: Յայտնի է որ աւանդութիւնները և զուեալեմքները պատմութեան մէջ իբրև երրորդական կամ չորրորդական դեր կարող են խաղալ և ոչ աւելի:

Երրորդ յիշեալ վկայագրի մէջ քանի մի անուններ և անցքեր են յիշվում, որոնք իբր թէ պատմական նշանակութիւն պիտի ունենային, բայց դոցա և ոչ մէկի ժամանակն է որոշած, ոչ թուականը յիշած: Քանի որ այդ անձանց և անցքերի յիշատակութիւնը

⁴⁾ Այս հետաքրքրական վկայագիրը սուած է Кавказская Старина ամսագրի մէջ (եր. 26—27) և ուղղած է առ «այայծառափայլ իշխան Էնուր Գաբրիել, Էնուր Յովհաննէս և Էնուր Բարսեղ Քրիստոսազօր հարկւրապետացն» Գեղամեաններին ի պատասխան նոցա խնդրագրի, որի մէջ յիշեալ անձինք վկայական են ուղում ոչ միայն կնիազութեան, իշխանութեան, կարուածատէրութեան, այլ և այն բանի, որ իբր թէ Գեղամայ հայ ժողովուրդը իւրեանց ճորտն է եղած: Ներսէսը, որ այն ժամանակ Եջմիածինը բարոյապէս կառավարում էր, ինքն է գրում միաբանութեան պատասխանը. նա համաձայնում է Գեղամեաններին կոչել իշխան և կնէազ (թէն կնիազութիւնը երբէք տեսնուած և լսուած բան չէ հայոց և պարսից մէջ), համաձայն է նոցա և այս ինչ կալուածների տէր համարել, բայց զայրացած կերպով հերքում է Գեղամայ հայ ժողովրդի ճորտութիւնը. ճորտ կամ ստրուկ երբէք չէ եղած, ասում է, հայոց մէջ...

ուրիշ և ոչ մի տեղ չենք գտնում, մեր աչքում զոքա զուրի են պատմական նշանակութիւնից:

Չորրորդ՝ չնայելով որ վկայագիրը հաստատում է թէ Շահազիզեան-Կամարականները երկար ժամանակ Աշտարակայ տէրն են եղած և իշխան անունը կրած, այսու ամենայնիւ ոչ Աշտարակի և ոչ ուրիշ որևէ տեղերի եկեղեցեաց, խաչքարերի կամ գերեզմանաքարերի արձանագրութեանց մէջ, որքան որ զոքա հրատարակուած են, ոչ մի տեղ ոչ Շահազիզեան, ոչ Կամարական (նոր) և ոչ կապուած Շահազիզ-Կամարական անուն ենք գտնում: Նոյն իսկ վկայագրի մէջ յիշած անձանց անունների արձանագրութիւնները չկան:

Եւ հինգերորդ՝ նոյն իսկ վկայագիրը գրող և սուող Ներսէսը, այս գործի մէջ մէկ կողմից Յովսէփ արքեպիսկոպոսի քաղաքականութեանը հետեւելով և եղբօրը նախարարական ծագումն ընծայելով, միւս կողմից ամենևին չունի նմանած Յովսէփ արհուն: Մեզ մօտ կան Ներսիսի մօտ չորս հարիւր գրութիւնները սկսած եպիսկոպոսութիւնից մինչև կաթողիկոսութիւնը, թէ պաշտօնական, թէ բարեկամական և մտերմական և թէ լոկ ընտանեկան գրութիւններ, բայց ոչ մէկի տակ նա Շահազիզեան-Կամարական ստորագրած չունի, այլ ամեն տեղ «Աշտարակեցի»: Նոյն է այս իրողութեան պատճառը, եթէ ոչ այն, որ իւր խոհունակ միտքը երբէք չէ թող սուած իրան՝ ընդդէմ իւր ճիշտ համոզման գրիչ շարժելու:

Վերջ ամենայնի պէտք է զիտենալ, որ նոյն իսկ Ներսէսը ծաղրում է Եջմիածնի տուած այդ տեսակ վկայագրերը և զգուշացնում է Նիրեմին որ չլինի թէ ուսաց տէրութեան կողմից այդ մասին անբուականութիւն ծագի: ⁵⁾

⁵⁾ Ներսիսի նամակը առ Նիրեմ կաթողիկոս. «Վեհափառ Քահանա-« յապետ: Յաղագս ազգաբանութեանց ազայ Մարգարին Ապրոյեանց « (Զմիւռնիացոյ) ծանեայ դժբանս տեսա՞նդ, այլ նորա գրութիւնքն վասն « ազգաբանութեանց այդր առ տէրութիւն ձեր թէ կարելի լիցի գտանելն « և առաքելն ջանացայց վասն կարեօր եղանակին: Բայց քանզի պատճառ « ետուր ՚ի վերայ այդպիսեաց, վասնորոյ պարտաւորիմ յայտնել որդրմած « տէր իմ՝ զի այն եղանակ ազգաբանութեանց, որ սովորութիւն է եղեալ՝ « թէ քննեաց սուրբ ժողովն, եղիտ ի զիրս յիշատակաց սուրբ Աթուոյն և « այլ այսպիսիք, հաւատա ինձ զի զողացուցանեն զիմս սիրտ, մանաւանդ

Բնական է եզրակացնել, որ յիշեալ վկայագրի վերաբերու-
թեամբ Եփրեմի վերևը բերած նամակները և Ներսիսի կամսարական
նախարարներից սերուած լինելը աւելի քիչ արժողութիւն ունին
պատմութեան առաջ, թէև, կրկնում ենք, գուցէ և իրաւ լինիներ-
կայ կամսարականների և Շահազիզեանների տան մէջ գտնուած ա-
ւանդութիւնը իւրեանց ծագման մասին:

Մոյն կամսարական նախարարներից Ներսիսի սերունդը մասին
փոքր ինչ տարբեր և աւելի անհիմն կերպով պատմում է և Պատ-
կանեան պատուելի ծերունին իւր «Մաղկաքաղի» մէջ: 6) Ըստ նորա
կարծեաց՝ Սիւնեաց երկրի ոսքի կանգնելու ժամանակները նշանաւոր
Գաւթ բէկի օգնականներից մէկը եղած է ոմն կտրուկ կարապետ
աղայն կամսարական, որից ծագումն ունի Ներսէսը. սա վերջը, 1730
թուականներին, ծառայում է թահազ Ղուլի Խանի մօտ և այն-
քան սիրելի է լինում, որ ասվում է «Շահազիզ»: Այս Շահազիզ

« ևս զի լսեմս ականջօք իմով զձայն քրթմնջողացն որ սկիզբն է երկանց,
« թէ ունին յԱթոռն զգիրք այնպիսի, ուր գոր ինչ վասն ում որոնել կա-
« մնացն, անդրէն գտանել կարեն ևայն ևայն, ծաղրական զրոյց բազում,
« ըստ որոց համարիմ թէ ոչ անագան բացցեն և բերանք ուռսաց ՚ի հար-
« ցանել զայսմանէ. քանզի մերքն իսկ գրեթէ հետամուտ են ՚ի գրգռել
« զնոսա ՚ի վաղուց հետէ: Մի արասցէ տէր իմ՝ միանգամ արատեսցի,
« այն է զի յաւիտենականապէս վերջանայ հաւատարմութիւն և եղիցի ընդ-
« հանրական զրկանք և ողորմելութիւն վասն ամենայն ազգին, որոց առ-
« կայծեալ յոյս բարեաց չգոյ այլ՝ բաց ՚ի սրբոյ Աթոռոյն և ՚ի գերագահ
« քահանայապետութենէ նորա:

« Առաւելապէս ջանամ զի թէ կարողացայց և Սաթովի զիրն ըստ իմումս
« կարեաց փոխակերպել հաւանական ձեօք իմն և այսպէս դարձուցից ՚ի
« միւսանգամ աշխատ առնել զգրօղն: Եւ զի վեաս թղթոյն մի ընկալցեն
« նախկին պատճառ իմոյ վեասուց ՚ի փախչիլն յաշխատութեանց զրօղքն,
« ահաւասիկ մատուցանեմ ձերում վեհափառութեան զմի օղմա թուղթ
« ամենարժան քահանայապետական զրութեանց, և ցանկամ, զի սրբու-
« թիւն ձեր զես լաւագոյնս և բազմապատիկս վայելեսցէ բարեբախտու-
« թեամբ բազմաւ: Ողջ լիցի տէրութիւն ձեր. ձերում վեհափառութեան.
« Արքեպիսկոպոս հայոց վրաստանու Ներսէս Աշտարակեցի. փետրվարի
« 3. 1816. (Թիֆլիս):» Այս գրութեան մէջ այնքան պարզ է ցոյց տուած
էջմիածնի վկայագրերի արժողութիւնը, որ մեր մեկնութեանը կարօտ չէ:

6) Մաղկաքաղ ՚ի լիակատար կենսադրութենէ սրբազան Հայրապե-
տի Ներսիսի Ե ևայն ևայն. գլուխ ա. Զմիւռնիա, 1875:

« մականունն այնքան հասարակեցաւ, մինչև նորա քեամ սար (կամ
« սար) աղբանուը մուսայութեան պիտի տրուէր, եթէ սրբազանն
« Ներսէս երկուն ևս չկազուրէր՝ որպէս գերդաստանական աւանդ:»
Իսկ ինչ որ կվերաբերի համար կոչման՝ պատուելի ծերունին մեկ-
նում է շատ հեշտ: Գաւթ բէկի պատերազմների ժամանակ, ա-
սում է նա, յիշեալ կարապետ աղան պարսից սրով «վերաւոր-
« եալ կորոյս իւր գազաթի մասն, վանորոյ՝ յետ առողջանալոյ՝
« Պարսիկք սկսան նորան քեամ սար (կիսագազաթ) կոչել:» Զը նայելով
այս հեշտ և զիրքմբունելի մեկնութեանը կամսարական կոչման, նոյն
յարգոյ ծերունին Ներսիսին դարձեալ նախարարական կամսարական-
ների սերունդ է համարում: Սրբեօք իւր ո՞ր կարծիքը վերապա-
տուելի է և կամ այս ու այն ասածները ո՞ր պատմական աղբիւրի
վրայ է հիմնուած:

Բայց քանի որ մեր զրականութեան մէջ Ներսիսի վերաբե-
րութեամբ ամէն ասածն ու լածը տակաւին տեղ ունին, մենք էլ
աւելորդ չենք համարում յառաջ բերել այստեղ մեր լածը, իբր
մի այլ աւանդութիւն: Տասնութերորդ դարու սկզբներում կամ
աւելի առաջ, ըստ մեր լածին, Երևանի գաւառում գտնուած
Սուրմալուի վարչութիւնը պարսիկները յանձնում են հայազգի ոմն
Սաղաթ բէկի, որից ծագեցաւ այժմեան կամսարականաց տոհմը:
Սաղաթ բէկի կրտսեր եղբայր Շահազիզը, բաժանուելով նորանից,
գալիս է բնակում Աշտարակ զիւղում. ահա այս Շահազիզից ծա-
գումն ունի Թորոսը, որ Ներսէս կաթողիկոսի պապն էր: Գալով
կամսարականներին՝ վերոյիշեալ աւանդութիւնը այս տեսակ է շարու-
նակվում. Երևանի Ահմէդ Խանի ժամանակ սիրելի է լինում սորան
յիշեալ Սաղաթ բէկից սերած ոմն Մինաս աղա: Խանը Սուրմալուի
(որ հին Արշարունեաց գաւառի մի մասն է) մեղքութիւնը Մինասի
վրայ է հաստատում: Մինասը իւր Թաղէոս (որ յետոյ յայտնի է
Մերդա Թաղէոս անունով) որդուն ուղարկեց Երևան հայերէն, պարս-
կերէն և արաբերէն սովորելու: Թաղէոսը նախ Ահմէդ Խանի ու
սորանից յետոյ Հիւսէյն Խանի անձնական կալուածների կառավարիչ
և հոգաբարձու էր: Մինչև դարու սկզբները յիշեալ Թաղէոսը սո-
վորաբար ստորագրվում էր «Մերդա Թաղէոս Մէլէ Մէնասեան», բայց երբ
որ ուռսաց գալը նախագուշակելով շատերը տիտղոսների մասին նա-
խապատրաստութիւններ տեսան, երևի թէ միզայ Թաղէոսն էլ
փոքր ի շատէ նեղութիւն է կրած այդ մասին, վասն զի թէև նա

Արշարունեանց դաւառում ոչինչ կալուած չունէր, այսու ամենայնիւ 1808 թուին մի պաշտօնական գրութեան մէջ առաջին անգամ տեսնում ենք այսպիսի մի ստորագրութիւն «Միրզայ Թաղէոս Մելիք Մինասեան Սաղաթբէկեան Կամսարական իշխան Արշարունեան հայրենի դաւառին»։ Այս պաշտօնական գրութեան հետ ընթերցողը կը ծանօթանայ իւր տեղը։

Միրզայ Թաղէոսը ունէր միակ որդի Միրզայ Նզնակ անունով, որ հօր նման հմուտ էր հայերէն, պարսկերէն և արաբերէն լեզուներէ։ Երբ Թիֆլիսի մէջ Ներսիսի հիմնած դպրոցի բացուելու և ծաղկելու լուրը ամեն կողմ տարածուեցաւ, Նրեանի դաւառից, ինչպէս և շատ ուրիշ տեղերից, քանի մի երիտասարդներ շտապեցին Թիֆլիս այդ փրկարար հիմնարկութեան մէջ ուստական և Ֆրանսիական լեզուները ուսանելու. ի թիւս այդ երիտասարդների 1826 թուին եկաւ յիշեալ դպրոցը և Նզնակը, իւր մօտ 20 տարեկան հասակում։ Մօտ երկու տարի, այն է մինչև պարսից պատերազմի վերջանալը, Նզնակը մնաց Ներսիսեան դպրոցում, ուր փոքր իշատէ ուսուցիչ և Ֆրանսիերէն սովորեց, ապա պատերազմի վերջանալուց յետոյ վերադարձաւ Նրեան և իւր միրզայութեան պատուանունը վերան պահելով մտաւ ուստաց ծառայութիւն, աստիճան ստացաւ և քանի մի պաշտօններ վարեց։ Այն ժամանակները դեռ միրզայ Թաղէոսը կենդանի էր. հայր և որդի Գառնի և Վէդի (հին Գվին) գիւղերի մէջ գնեցին եօթն դրանի (4 դանկը մի կատարեալ գիւղ կը հաշվուի) գիւղ։ Նզնակը ամուսնացաւ Մելիք Սահակ Մելիք Աղամալեանցի երկրորդ դստեր հետ (առաջին դուստրը Վրաց արքայազն Աղէքսանդրի ամուսինն է) և այդ ամուսնութիւնից ծնաւ պ. Բարսեղ Կամսարականը, որ այժմ Նրեանի նահանգում դաւառապետ է։

Սակայն մեր այս տեղեկութիւնն էլ աւելի մօտիկ ժամանակների վերաբերելով, Շահազիզ-Կամսարականների հին նախարարական ցեղեց ծագման հաստատութեանը ոչինչ չի աւելացնում։ Ըստ մեզ, այս խնդիրը մնում է չըլուծած և շատ ցանկալի էր որ Շահազիզեանների և Կամսարականների յարգելի գերդաստանները չնայէին տպագրութեան աւանդելու իւրեանց ձեռքում գտնուած գրաւոր յիշատակարանները և կամ ունեցած բերանացի աւանդութիւնները։

Ինչպէս որ վերևը ասացի, Սուրմալուի մելիք Սաղաթբէկի եղբայր Շահազիզը, եղբորից բաժանուելով գալիս է բնակում Աշտարակ գիւղում։ Շահազիզի սերունդից մէկը լինում է Թորոսը, որ Ներսէս կաթողիկոսի պապն էր։ Թէ ինչով էր նշանաւոր այդ Թորոսը՝ մեզ յայտնի չէ։ Թորոսը Յարութիւն անունով մի որդի ունէր. վերջինս՝ ամուսնանալով Բիւրասիանցի տէր Ղազար տւազ քահանայ Բարաջանեանցի դստեր Սուսամբարի հետ, քահանայութեան նուիրեց իրան և, մինչև խորին ծերութիւնը Աշտարակ գիւղում ապրելով, յայտնի էր ամենքին Տէր Յարութիւն անունով։ Թէև մեզ յայտնի է որ Աշտարակցի Տէր Յարութիւնը իբրև ծերունի և յարգելի քահանայ միշտ պատիւէ ունեցել էջմիածնեցոց առաջ, բայց արժանապատիւ Պատկանեանը, դարձեալ չգիտենք ինչ աղբիւրից առած, հետևեալ տիտղոսներն է տալիս նորան։ «Ներսիսի հայրն էր, « ասում է նա, երևելի (?) աւագերէցն Տէր Յարութիւն Կարապետ « եան (?) Թորոսեան է ճիշդը) Շահազիզեանց Կամսարական (?), յա « ւուրս Սիմէօն կաթողիկոսի, խոստովանահայր նորա և Գրաներէց (?) « կաթողիկոսարանի, և Աշտարակ գիւղաքաղաքի ժողովրդապետ (?) « և այլն»։

Տէր Յարութիւնը ոչ թէ Կարապետի, այլ Թորոսի որդի լինելով, ինքը դուցէ կրազած չէ իրան Կամսարական կոչելու, և ոչ երբէք եղած է կաթողիկոսական խոստովանահայր կամ դրաներէց, որովհետև կաթողիկոսների խոստովանահայրերը սովորաբար լինում էին եթէ ոչ էջմիածնի միաբան ծերունի եպիսկոպոսները, զոնէ Վաղարշապատի քահանայք, իսկ դրաներէցութիւնը հայոց երկրի լաւ օրերում միմիայն թաղաւորական պալատին էր սկսականուած և կաթողիկոսները երբէք, որքան գիտենք պատմութիւնից, դրաներէց չեն ունեցած, այլ երբեմն դրան եպիսկոպոս « Վանայ երէց։ Ինչպէս ուրեմն կարծել, որ էջմիածնի անշքեղ ժամանակներում կաթողիկոսը պէտք է ունենար դրաներէց անունով պաշտօնակալ, և ինչպէս պիտի կրէր Տէր Յարութիւնը այդ պաշտօնը, քանի որ ինքը շարունակ Աշտարակ գիւղում էր բնակում և ուրեմն վանքից փոքր շատէ հեռի։ Աշտարակ գիւղն էլ, որ այն ժամանակները հազիւ հարիւր տուն բնակիչ ունէր, ի պատիւ Ներսիսի արժանապատիւ Պատկանեանի գրչի տակ գիւղաքաղաք է դառնում, իսկ Տէր Յարութիւնը այդ գիւղաքաղաքի ժողովրդապետ, թէև, որքան մեզ յայտնի է նախ ժողովրդապետութեան պաշտօնները քահանայից

ձեռք չէ եղած և երկրորդ, որ այդ պաշտօն վարողները եղած են բոլորը ուրիշ անձինք և այն ևս աշխարհականներից: Ի՞նչ հարկ կար Ներսիսի յարգը բարձրացնելու համար այս տեսակ բանաստեղծութեանց ղիմել և միթէ դարուս այս երեւելի հայ հովուի նշանակութիւնը պիտի պակասէր, երբ ամենքը իմանային որ սա որդի է եղած մի խղճուկ, աղքատ զիւղացի քահանայի, որ սա ծնած է մի աղտոտ, խոնաւ և զուրկ շքեղութիւնից գետնափորի մէջ և այլն և այլն:

Յիշեալ Տէր Յարութիւնը ծերութեան հասնելով վախճանեցաւ և թաղուեցաւ Աշտարակ զիւղում, իսկ տէրտէրակին Սուսամբարը (Ներսիսի մայրը) իւր կրտսեր որդու կարապետի հետ գաղթելով Քիֆլիս վախճանեցաւ և թաղուեցաւ այժմեան Զրկինանց անուանեալ եկեղեցու բակումը 1819 թուին մօտ 70 տարեկան հասակում:

Տէր Յարութիւնը չորս զաւակ ունէր՝ Թորոս, Հռիփսիմէ, Գայիանէ և Կարապետ: Թորոսը, պապի անունը կրելով, կուսակրօնութիւն ընդունելով անուանեցաւ Ներսէս (վերջը կաթողիկոս). Հռիփսիմէն ամուսնացաւ թուր շինող ոմն Սիմօն արհեստաւորի հետ, մեռաւ Քիֆլիսում և թաղուեցաւ Վերայի հասարակաց գերեզմանատանը⁷⁾: Գայիանէն ամուսնացաւ Վաղարշապատ զիւղում ոմն Օհանէսի հետ, իսկ Կարապետը Ներսիսի հրաւիրմամբ ընտանիքով եկաւ նախ Քիֆլիս, ապա գնեց քաղաքից մօտ 30 վերստ հեռու գտնուած Դուռնուկ զիւղը, ուր և 1830 թուին խօլերայից վախճանեցաւ և թաղուեցաւ: Կարապետի կին Ղու.մաշը նմանապէս մեռաւ Քիֆլիսում և թաղուեցաւ Վերայի նոյն հասարակաց գերեզմանատանը: Կարապետը ունեցաւ երկու արու զաւակ՝ Յովակիմ և Յարութիւն և երեք զուսոր՝ Համասիլուս՝ ամուսնացած պ. Վարդան Շերմազանեանի հետ, Աննա՝ ամուսին պ. Յովհաննէս Մամիկոնեանի և Խանում՝ պ. Աղաջան Աստուածատուրեանի:

Հանգուցեալ Կարապետի և իւր որդոց մասին բաւականին տեղեկութիւններ են գտնուում Ներսիսի նամակագրութեանց մէջ, վասնորոյ մենք էլ կը բաւականանանք դոցա իւր տեղը յառաջ բերելովը:

7) Վերայի հասարակաց գերեզմանատունը այժմ դարձած է ուսաց և վրաց գերեզմանատուն, այն ինչ քսանական թուականներին, քանի որ Զաւրովի անուանեալ գերեզմանատունը չկար, այդտեղ անխորաբար թաղվում էին և հայք, վասնորոյ կոչվում էր հասարակաց:

Բ.

ՆԵՐՍԻՍԻ ԾՆՆԻԵԱՆ ՏԱՐԻՆ

Ներսիսի նման մեծ մարդու կենսագրութիւնը գրելիս երկրորդ պատահած դժուարութիւնը նորա ծնելու տարին, ամիսը և օրը որոշելն է: Երբ մի օր, այն է փետրուարի 13-ին 1857 թուի, Քիֆլիսի Վանքի մեծ զանգակը գուժեց քաղաքիս հայրապետի վախճանը, առաջին խօսքը այս տխուր լուրը միմեանց պատմող հայոց. այն էր լինում, որ նա հարիւր տարուց կամ շատ մօտ էր, կամ գուցէ անց, և թէ դեռ ևս երեկոյեան այնքան քաջառողջ, զուարթ և ամենեկին ծերութեան վերայ չգանգատուող մի անձն էր: Ամէնքը մի առանձին պարծանքով պատմում էին, որ այդպիսի խորին ծերութեան միմիայն Ներսիսի նման զգոյշ ապրող և խելացի մարդիկ կարող են հասնել և այլն և այլն: Հայրապետի անսպասելի վախճանը տպագրուեցաւ Ռուսիայի և Եւրոպայի գրեթէ բոլոր լրագիրներում, և մէկը միւսից առած ամէնքը սխալաբար 96 տարեկան շինեցին հանգուցելոյն...: Այս սխալը կրկնուած է երբեմն երբեմն նոյն իսկ հայ պարբերական հրատարակութեանց մէջ, (օրինակ արժանապ. Խորէն վարդապետ Ստեփանէի հրատարակած «Հայկական աշխարհի» 1864 թուի № № 1 և 2 մէջ տպած Ներսէս Ե-ի կենսագրութիւն յօդուածի մէջ կարծվում է թէ Ներսէս ծնած լինի 1760 թուին): Ոմանք կարծեցին նորան վախճանած 90 տարեկան հասակում, այլք վերջապէս (ինչպէս արժ. Պատկանեանը) 89 տարեկան և այլն և այլն:

Այս անմոռանալի անձնաւորութեան ծննդեան տարին որոշելու համար մեր ձեռքում կան թէ պաշտօնական գրութիւններ և թէ նոյն իսկ Ներսիսի գրութիւնները, որոնք փոքր ի շատէ միմեանց հետ համաձայն լինելով, հակառակ են միանգամայն վերոյիշեալ գրութեանցը:

Միս ուշադրութեան արժանի են այդ մասին երեք մի և նոյն բովանդակութեամբ պաշտօնական գրութիւններ, թէ և Նիքիեմ կաթողիկոսի ստորագրութեամբ, բայց որպէս ո՞րից հասկացվում է նոյն իսկ Ներսիսի շարադրած, այն է՝ 1.) 1814 թուի փետրուարի 18-ին կաթողիկոսի նամակը Ռուսաց Սինօդոսի օրէր-պրօկուրօր իշխան Գօլիցինին, 2.) նոյն թուականին կաթողիկոսի գրած նամակը

530
88
41

կովկասու հրամանատար ժեներալ Ռոտիշչեվին և Յ.) նոյն թուականին Ներսիսին յանձնուած իւր ծառայութեան վկայագիրն (ատեստատ անունով): Երեք զրութեանց մէջ էլ ասած է որ Ներսէսը 1814 թուի փետրուարին «է ի հասակի 43 ամաց»: Ուրեմն ծնած է լինելու 1771 թուին:

Երկրորդ՝ Ներսէսը իւր քանի մի նամակների մէջ պարզապէս յիշում է իւր տարիքը, օրինակի համար 1816 թուի օգոստոսի 16-ին թիֆլիսից Պետերբուրգ Յարութիւն Աստուածատուրեանին⁸⁾ ուղղած նամակի մէջ ասում է թէ ինքը այժմ 46 տարեկան է. ուրեմն 1770 թուին ծնած, իսկ 1854 թուի յունվարի 23-ին թիֆլիսից Թէհրան կնեազ Դաւիթ Յովսէփեան Մելիքեանցին⁹⁾ գրածի մէջ կոչում է իրան 84 տարեկան, որ դարձեալ ասել է 1770 թուին ծնած: Նամակների և վերոյիշեալ պաշտօնական գրութեանների մէջ եղած մի տարուայ զանազանութիւնը վերացնելու համար՝ կարծելու է որ Ներսէսը ծնեց 1770 թուի կիսին. մեր այս կարծիքը հաստատուում է և նորանով, որ յիշեալ պաշտօնական գրութեանց մէջ ասած է, որ սա 7 1/2 ամաց հասակումն է ընծայուած հոգևորականութեան, այն ինչ վերոյբերեալ Յարութիւն Աստուածատուրեանին գրած նամակում Ներսէսը ասում է թէ հոգևորականութեան ընծայուեցաւ 8 տարեկան հասակում: Ուրեմն ծնած լինելով 1770 թուից մօտ կէս տարի անցած, ինքը Ներսէսը այդ կէսը մի ամբողջ տարի է

⁸⁾ Այս Յարութիւն Աստուածատուրեանցը այն նշանաւոր Արտեմի Բուզդանիչ Արարատսկին է, որ Վաղարշապատից մինչև Պետերբուրգ հասնելը ամէն կերպ նեղութիւն կրած է և հեղինակած երկու հատոր շատ հետաքրքիր «Жизнь Артемия Арааратскаго» գիրքը, որ շատերին ծանօթ է: Ներսէսը 1816 թուին սորան գրած նամակի մէջ ասում է՝ «Ես գորով 46 ամեայ և հասակաւ այժմ, և ՚ի մէջ 8 ամեայ հասակի իմոյ մտեալ ՚ի պաշտօնաւ տարութիւն հոգևորական կարգի» և այլն և այլն:

⁹⁾ Հայագրի իշխան կնեազ Դաւիթ Յովսէփեան Մելիքեանցը բնակում էր Թէհրան և պարսից ծառայութեան մէջ զանազան պաշտօններ էր վարում: Սորան գրած նամակի մէջ (յունվարի 23-ին 1854 թուի) Ներսէսը ասում է՝ «...այլ գտանիմք բազմայոյս ներողութեանց ձերոց, յուսալով թէ գրութիւնք որդւոց մերոց և ծանօթութիւնք վասն որպիսաւ բար զրութեան մերոց ի մասին գրագրութեանց ըստ համազգական մերում եկեղեցական պարտաւորութեանց ծանրացելոց ի վերայ մեր առաւել քան զլար մեր ի հասակի 84 ամեայ մերում ծերութեան...»

ընդունում, այն ինչ պաշտօնական գրութեանց մէջ բոլորովն դուրս է ձգվում: Հետևաբար կարծելու է որ վախճանած օրը, այն է փետրուարի 13-ին 1857 թուի, ծերունու 86 տարին լրացած էր և դնում էր դէպի 87 տարին:

Շատերը աւանդութեամբ պնդում են, որ այս մեծ մարդը վախճանեցաւ նոյն ամսին և նոյն օրը, երբ ծնել է, այսինքն թէ դարձեալ փետրուարի 13-ին: Տպագրութեան մէջ էլ Ներսիսին ծնած են համարում փետրուար ամսին. 1875 թուականներին «Մասիսի» մէջ տպած յօդուածներում (№ 1694) նշանակած է փետրուարի 18ը, իսկ արժ. Պատկանեան համարում է փետրվարի 13ը (վախճանման օրը) և մինչև անգամ աւելացնում է ազգային թուականը (ՌՄԺԷ), զիւր տարւոյն ծ. և Թ, վերադիրն ԻԱ, իբր թէ այս բաների նշանակելն էլ մի որևիցէ խորհուրդ ունի պատմական գրութեան մէջ: Սակայն որքան որ մենք վերը յիշեցինք պաշտօնական գրութիւնները և Ներսիսի բուն նամակները, ոչ մէկի մէջ չէ ասած թէ սա ծնած է փետրուարին և այս ինչ օրը: Ո՞ր տեղից են առած այս ամիսն ու օրը — ցանկալի էր զիտենալ: Քանի որ մեզ հակառակը չեն ապացուցանելու, մենք հակամիտ ենք կարծելու որ Ներսէսը ծնած է 1770 թուի ամառուայ վերջը կամ աշնան սկզբներում, որով ինչպէս ասացինք, կվերանայ պաշտօնական գրութեանց և նամակների մէջ եղած մէկ տարուայ զանազանութիւնը:

Ներսիսի մկրտութեան անունն էր Թորոս (որ իւր պապի անունն է) և իւր կնքահայրն էր Գալուստ արքեպիսկոպոսը, որին անուանում է նա «Նախապատիւ արքեպիսկոպոս Պատրիարզական Աթոռոյս»: ¹⁰⁾

Գ.

ՆԵՐՍԻՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆԸ

Ներսիսին մանկութեան ժամանակից ճանաչող անձինք միաբերան վկայում են, որ նա իւր երեխայութեան ժամանակն էլ եղել է մի վտիտ, նիհար, կարճ հասակով, աշխոյժ և կրակոտ, խաղական

¹⁰⁾ Այս Գալուստ արքեպիսկոպոսը, որի ազգը Ներսիսեան էր, այն ժամանակուայ էջմիածնայ յարգելի միաբաններից մէկն էր:

այն աստիճան, որ մտնենում է չարութեան, հնարագէտ, սրամիտ, զարմանալի յիշողութեան տէր, աշխատասէր, ընկերասէր, բայց և նախանձոտ ու վրէժխնդիր:

Վկայում են ¹¹⁾ որ Սիմէօն Բղնունի արքեպիսկոպոսը պատմած է, որ երբ փոքրիկ թորոսը (Ներսէսը) դեռ վեցամեայ էր, մէկ օր քուրդերը Աշտարակ գիւղեց մի օրիորդ փախցրին, «գիւղացիք ժողովեցան և կամենում էին զնալ խանին զանգատելու, բայց ոչ մինը « նրանցից չէր վտահանում, պատժից երկիւղ կրելով: Թորոսը « կտուրի վրայից այս բանը տեսնելով ասաց իւր մօրը՝ թէ «մայրիկ, « թող փոքր մի ևս համբերեն, կը գայ ժամանակ, որ այդ բարե բարոսաց անունը կը ջնջեմ ես»: Եթէ փոքր ինչ անհաւատալի է վեց տարեկան երեխայի բերանից այս բառերը լսելը, այսքանը զոնէ ճիշդ է, որ շատ մատաղ հասակից սկսած զգուանք է կրած Ներսէսը զէպի պարսից բարբարոսութիւնը, վասնորոյ և այնքան ճիգ թափած իւր հայրենի երկիրը ազատ պահելու մահմետական բռնութիւնից:

Աւանդութիւն կայ թէ Սուսամբար տէրտէրակները մինչև թորոսի ծնունդը քանի մի օրդէք ևս ունեցած է, բայց բոլորն էլ մեռել են, այդ պատճառաւ խեղճ կինը ուխտել է, որ իւր այնուհետև ծնած արու զաւակը Եջմիածնայ իջման տեղին նուիրէ, այսօրինքն ուխտում է որ կուսակրօն (վարդապետ) լինի, միայն թէ տարի: Այդպէս ահա փոքրիկ թորոսի ծնողքը վճռել են նորան վարդապետացու պատրաստել: Համաձայն այս վճռի, 7 1/2 տարեկան հասակում, ինչպէս ասած է Ներսիսի ծառայական ցուցակում, ¹²⁾ կամ 8 տարեկան ժամանակը, ինչպէս գրում է ինքը Ներսէսը, փոքրիկ թորոսին իւր կնքահայր Գալուստ եպիսկոպոսը տանում է Եջմիածին և կարգում Սիմէօն կաթողիկոսի բացած ժառանգաւորաց դպրոցի սանիկ: Այս դպրոցը այն հիմնարկութիւններից մէկն էր որ յաւիտենական անմոռաց պիտի պահէ հայոց մէջ Սիմէօնի անունը: Ուսումը

նասէր հայրապետի շնորհքով, ինչպէս վկայում է արժ. Պատկանեանը, ժողոված էին այդտեղ քանի մի համբաւաւոր հայ վարժապետներ և վարդապետներ՝ այն է՝ Յարութիւն վարդապետ Բասնցին, Պետրոս վարդապետ Բերդումեանը, Աղամախանը, Տեր Ղափանցին, Բարսեղ Աեսարացին, Սահակ ահագինը և այլք, որոնցից մի քանիսը վերջին ժամանակների հայ պատմութեան մէջ դեր են խաղում: Հազու երկու տարիի չափ վայելեց թորոսը այդ դպրոցի բարեկարգութիւնը, որ ահա ուսումնասէր երջանկայիշատակ Սիմէօն կաթողիկոսը վախճանեցաւ (1780 թուին), իսկ նոր ընտրեալ Ղուկաս կաթողիկոսը, ինքը անուս և միանգամայն ազէտ լինելով, պատճառ եղաւ դպրոցի եթէ ոչ բոլորովին զոցուելուն, զոնէ նշանաւոր ուսուցիչների ցրուելուն և շուքը կորցնելուն: Անքական այդ փոփոխութիւններից յետոյ թէև փոքրիկ թորոսը շարունակում էր Եջմիածնայ մէջ իւր ուսումը, բայց Բերդումեանի, կամ Սահակ ահագինի դասերը լսելու չարժանացաւ, որովհետև Ղուկասի ժամանակ նոքա թողին Եջմիածինը: Թորոսի դասատու մնաց Խամնեցի Գրիգոր վարդապետը, որ յետոյ 1801 թուին Պօլսոյ պատրիարք ընտրուեցաւ:

Ներսիսի վերոյիշեալ ծառայական ցուցակի մէջ ասած է, որ սա մնացել է ժառանգաւորաց դպրոցի մէջ 13 տարի, այն է մինչև Ղուկասի հայրապետութեան տասնևմեկերորդ տարին ¹³⁾, ուրեմն մինչև 1791 թիւը, երբ արդէն իւր կնքաւոր Գալուստ արքեպիսկոպոսը ձեռնադրում է թորոսին աւագ սարկաւարդ և վերակոչում Ներսէս: Այս ժամանակ Ներսէսը քսան տարեկան էր: ¹⁴⁾ Այս տեղ փոքր ինչ կանգ առնենք և տեսնենք թէ ինչպէս էր այս նշանաւոր մարդոյ դպրոցական կեանքը: Այդ մասին փոքր ի շատէ տեղեկութիւններ են մնացել մեզ իւր դասընկեր և ժամանակակից մարդկանց զրոյցներէն: Ներսիսի դասընկերնից նշանաւորն է հաչակուած

¹¹⁾ Տես «Մասիս» № 1694. 1875 թիւ.
¹²⁾ «Որ գոյով աշակերտեալ ընթերցողութեան ՚ի ժամանակի 7 1/2 « ամաց հասակի իւրոյ աստէն յաթոռս Արարատեան ՚ի վերջին ամս պատուրիարքութեան աթոռոյ յաւիտենական փառաց արժանաւոր սրբազնաբունեղ Սիմէօն բարեհռչակեալ պատրիարքի»: Բուն օրինակը այս գրութեան, ինչպէս ասած է, գտնվում է պ. Յարութիւն Շահազիզեանի մօտ Թիֆլիսում:

¹³⁾ «Եւ զամս 13՝ այն է մինչև ցմեռասան ամս պատրիարքութեան եւ ռանելի հայրապետին մերոյ Տեառն Ղուկասու յարատեալ ի մէջ ուսումնական աշակերտութեան՝ հմտացեալ է եկեղեցական ուսմանց և աստուածաշունչ զրոց ևս և արհեստից քերականութեան և ճարտասանութեան իբրև յառաջին աստիճանի ի մէջ ամենայն ազգիս Հայոց, ևս « և Աստուածաբանական կամ տրամաբանական գիտութեանց ոչ նուազ « քան զշտանեցեալսն յազգի մերում» (ծառայական ցուցակ Ներսիսի).
¹⁴⁾ «Ի 20 ամի հասակի իւրոյ ընկալեալ է զաստիճան աւագ սարկաւարդութեան Յաթոռն Արարատեան»: Նոյն ծառայական ցուցակ Ներսիսի:

Ահարոն վարդապետը, ¹⁵⁾ որ յայտնի է իբրև բանաստեղծ, զարմանալի աղքատասէր և քաջ, օրինակելի ժամասաց: Սա հիացմամբ պատմում էր Ներսիսի ընդունակութեան և յիշողութեան մասին: «Ներսէսը, պատմում էր նա, իրանից աւելի հասակաւոր աշաճ և կերտներն զասերը լսելով անմոռաց պահում էր մտքումը: Մեզնեց և աւելի քիչ էր սերտում, բայց աւելի լաւ համար տալիս: Նոյն Ահարոն վարդապետը ծիծաղով պատմում էր, որ մանուկ Թորոսը (Ներսէսը) իւր տաս—տասներկու տարեկան հասակում ծածուկ թեւ ու ասեղ էր պահում վրան և աշակերտներն ի գդակների բերանը գաղտնի կարում էր կամ մի երկու տեղեց թելով հուպ տալիս և երբ նոքա դասատանից դուրս գալու ժամանակ ուղում էին իւրեանց գդակները ծածկել, գդակները չէին մոնում գլուխնին. խեղճ տըղայքը քանի մի անգամ առանց ուշադրութեան փորձում էին ծածկել և դարձեալ չէր յաջողում մինչև որ կարածը նկատում էին և ընդհանուր ծիծաղ էին յարուցանում ընկերների մէջ: Աշակերտները, պատմում էր Ահարոն վարդապետը, ծալապատիկ միմեանց

¹⁵⁾ Ահարոն վարդապետը քաջ երաժիշտ էր և անդիր գիտէր ամբողջ հին և նոր կտակարանը, Նարեկը և քանի մի ուրիշ հոգևոր գրքեր: Սորա ժամանակ նոր հրատարակուել էր հայր Միքայէլ Չամչեանի երեք հատոր Հայոց Պատմութիւնը: Այսպիսի մի մեծ աշխատութիւն և ահազին գործ հայոց գրականութեան մէջ մինչև այն օրը չէր տեսնուած, վասնորոյ շատ մեծ տպաւորութիւն ունեցաւ հայ ընթերցող հասարակութեան վրայ: Ահարոն վարդապետը Չամչեանը կարդալուց յետոյ մի օր անհետացաւ էջմիածնից առանց ոչ ոքի բան ասելու: Մի ամբողջ ասուց յետոյ յայտնուեցաւ, որ վարդապետս ծպտեալ հագուստով հետեակ գնացել է Պօլիս Չամչեանին տեսնելու: Օսմանեան մայրաքաղաքի մէջ երկար որոնելուց յետոյ պատմաբանի բնակարանը, վերջապէս գտնում է և ներկայանում նորան. «մտայ և և կայնեցի Չամչեանի առաջ, պատմում էր Ահարոնը, սրբան ստիպեց և նա ինձ բազմել, չբազմեցայ, քառորդ ժամ երեսին նայելուց յետոյ սեւ և նեակից դուրս եկայ և ուղղակի ճանապարհ ընկայ դէպի էջմիածին:» Վաղուց մեռած կարծուած Ահարոն վարդապետը, այս արեւելեան անգղիացին, մի օր հասնում է էջմիածին, պատմում է այդ բոլորը և ծոցից հանում է տալիս կաթողիկոսին Պօլսոյ պատրիարքի ուղարկած նամակները: 1833 թուին Կովնաննէս Կարբեցու օժման օրերը նա դուրս չեկաւ իւր սենեակից, որովհետեւ սաստիկ սիրում էր Ներսիսին և համարձակ, աներկիւղ յայտնում ամէնքին, որ հայրապետական վեհ աստիճանին արժանի էր Ներսէսը և ոչ Կարբեցին:

կողք կողքի տուած էին նստում դասարանում: Թորոսը (Ներսէս) ժամանակ էր գտնում երկուսի հանդերձների փեշերը ծածկաբար մինգմինի հետ շուլալէլ, այնպէս որ երբ նոքա ոտքի էին ելնում, տեսնում էին որ միմեանց հետ շաղիապուած են և չեն կարողանում զատուել: Շատ էին որոնում գտնել յանցաւորը, բայց նպատակի չէին հասնում, մինչև անգամ աշակերտաց գրպանները, գդակի ծալիքը և ամէն տեղ փնտրեցին և ոչինչ չգտան: Մի օր պատահմամբ Թորոսի արխալուղի կուրծքի վրայ թելերի ծայրեր երևեցան. փնտրեցին և նրա թիկնոցի տակ քանի մի թելած ասեղներ գտան շուլալած. այդպէսով յայտնուեցաւ քանի մի ամիս շարունակ աշակեաներին անհանդիստ անողը:

Թորոսը, պատմում էր դարձեալ Ահարոնը, իւրեան հասակակիցների կամ հասակով փոքր աշակերտների հետ շատ սիրով էր և ամէնքին սովորցնում էր իւրեանց դասերը, բայց իրանից մեծերին կամ յառաջագէմներին ասում էր և սիրում էր նորանց յիմարացնել ու վերաները խնդալ: Սուրբ Եջման տաճարումը ժամասացութեան ժամանակ ամէնքը շարվում էին համեմատ հասակի բարձրութեան, բայց Թորոսը միշտ աշխատում էր բարձրահասակների մէջ խառնուել և շաբաթ չէր անցնիլ, որ ժամ օրհնող կամ կարգապահ վարդապետները նորա ականջից բռնած չքերէին իւր հասակակիցների հետ չկանգնացնէին: Նրբ նա աւագ սարկաւաղութեան աստիճան ստացաւ, իւր աստիճանակիցների մէջ նորանից կարճահասակը չկար, բայց նա աշխատում էր ամենից բարձր կանգնել, և երբ ժամօրհնողը քանի մի անգամ աստեց նորան իւր տեղը կանգնել, Ներսէսը ՚ի վերջոյ յանդգնեցաւ ասել հրապարակաւ թէ ամարդուս ուսումով են գնահատում և ոչ բաձր հասակովը կամ յաղթանդամութիւնով:»

Պատմում են՝ որ եթէ պատահում էր Ներսիսին կուռել իրանից ուժեղների հետ և յաղթուիլ, այն ժամանակ նա վրայ էր թռչում և իւր սուր ու երկար եղունկներով չանկատում իւր հետ կուռողի երեսը: Այս պատճառով իւր հասակակիցները նորան «հոփոս» են եղել անուանում, և որովհետեւ Ղուկաս կաթողիկոսը շատ կատուասէր էր, վասնորոյ միաբանները ծիծաղելով ասում էին թէ «ահա Ղուկասի սիրած կատուններից մէկն էլ Թորոսն (Ներսէսն) է»: Բայց Ներսէսը վանքի մէջ սիրողներ և պաշտպաններ շատ ունէր. պատմում են որ մի եպիսկոպոս մի գող կատու ունէր, որի ձեռքից ոչինչ չէր ազատ-

վում: Թորոսը ընկուզե կեղևից բոժոժներ շինելով կապել էր կատուի ոտքերից, այնպէս որ խեղճ կենդանու գողութեան երթալու զիտաւորութիւնը իւր ժամանակին իմացուելով առաջն առնվում էր: Վանքի հին միաբան ծերունի Գուկաս եպիսկոպոսը Թորոսի այդ հնարագիտութեանը վրայ այնքան ուշադրութիւն դարձրեց, որ երբ միանգամ փոքրիկ Թորոսը հիւանդացաւ, եպիսկոպոսը մօտ երեք հազար դուրուշ ծախս արաւ նորան առողջացնելու համար, ասելով թէ «Թորոսը ժամանակաւ մեծ մարդ կլինի»: 16)

Մօտ 14 տարեկան հասակում Թորոսը յայտնի չէ թէ ինչ շարժառիթներից գրդուած փոխում է իւր անձը կուսակրօնութեան նուիրելու միտքը և երկու անգամ Եջմիածնից փախչելով, գնում է Ներևան և նշանվում է Մելիք Սահակ Մելիք Աղամալեանի ազգական մի աղջկայ վրայ, մանաւանդ որ այն ժամանակները սովորութիւն կար այդ հասակի մէջ նշանուելու և ամուսնանալու: Բայց երկու անգամն էլ, չնայելով Թորոսի բողոքին թէ «չկամիմ հոգևորական լինել և կուզեմ պսակուել», հրամանաւ իւր կնքահայր աթոռակալ Գալուստ եպիսկոպոսի Ներսիսեանց, բռնի տանում են խեղճ պատանուն վանքը, խրատում, յանդիմանում, սաստում և վճռական կերպով հրամայում միանգամայն մտքիցը հանել աշխարհ մտնելը: Թորոսի մայրն էլ Աստուծոյ առաջ երդումը սուտ չը հանելու համար համամիտ է Գալուստ եպիսկոպոսի վճռին. երբ մի անգամ այս եպիսկոպոսը խրատ էր տալիս փոքրիկ Թորոսին և հասկացնում որ նա հոգում է սորա համար իբրև հայր, Թորոսը համբերութիւնը կորցնելով պատասխանում է՝ թէ «իմ հայրը Տէր Յարութիւնն է և ոչ դու»: »

Քալով Ներսիսի ուսման Եջմիածնայ ժառանգաւորաց դպրոցում, յայտնի է միայն որ մտնելուց քանի մի տարի յետոյ սա այնքան յառաջադէմ է գտնվում, որ անուանվում է վերակացու դասատան կամ խալիփայ: Այս դպրոցի մէջ ձեռք է բերել Ներսէսը, ինչպէս վերևը յիշած իւր ծառայական ջուղակից երևում է, բացի ժամասածութիւնից՝ զիտութիւն Աստուածաշունչ գրոց, ուսել է քերականութիւն և ճարտասանութիւն, նաև Աստուածաբանական և տրամաբանական զիտութիւններ: Ճշմարիտ որ Ներսիսի գրած անթիւ նամակներից երևում է նորա Աստուածաշունչի զիտութիւնը, իսկ ինչ որ վերաբերում է նորա գրուածների լեզուին, պէտք է ասել,

16) Տես «Մասիս» 1694 №.

որ ով միայն կարգայ քսանական թուականներին դորա շարադրած նամակներից մի քսան, երեսուներ, նա միշտ կարող կլինի զանազանել Ներսիսի գրիչը այլոց գրուածներից: Ինչպէս երևում է, դա իրան կատարելագործել է հայկաբանութեան մէջ իւր եպիսկոպոսութեան ժամանակ Գաւթի և Գանիէլի պատերազմների միջոցին, երբ հարկից ստիպուած Ներսէսը անդադար այս կողմ այն կողմ նամակների ձևով տարածում էր Գաւթի անվայելուչ ընթացքի տխուր լուրերը, երբ միմիայն գրչի գեղեցկութեամբ, բառերի և ոճերի ընտրութեամբ և որ զլիսաւորն է՝ բանաստեղծներին վայել ոգևորութեամբ կարելի էր ՚ի զութ շարժել հեռաւոր տեղերի հայերին և օգնութիւն խնդրել Եջմիածնայ միաբանութեանը ընդդէմ Գաւթի: Եւ ճշմարիտ որ Ներսիսի միայն այն գրուածներն են վսեմ և գեղեցիկ, որոնց մէջ կիրք կայ, որոնք առանց ոգևորուելու չէին կարող գըրուել: Նորա կաթողիկոսութեան ժամանակուայ գրուածները ըստ մեծի մասին թոյլ են և երբեմն մեղանչում են բուն հայկաբանութեան առաջ, բայց և այս ծերութեան հասակում մի քանի բանակուրների մէջ, օրինակի համար Նազարեանների գործում, երբեմն երբեմն դարձեալ կենդանանում է առաջուայ Ներսիսի ոգևորութիւնը, կրթկոտութիւնը և միանգամայն գրչի գեղեցկութիւնը: Ամբողջ կեանքը՝ իւր սարկաւազութեան օրերից մինչև մահը, նուիրած լինելով քաղաքական կենաց, Ներսէսը երբեմն աշխարհավար պաշտօնեայ է հանդիսանում, երբեմն թշնամեաց համար թակարդներ լարող բարակ քաղաքագէտ, երբեմն հրացանը ուսին՝ զինեալ բանակի հրամանատար և երբեմն իւր ազգի զատիարակիչ, քարոզիչ և բարեկարգիչ առաջնորդ: Գուցէ այս բազմատեսակ գործունէութիւնն է պատճառը, որ Ներսէսը, բացի քսանական թուականներին տպած քանի մի տետրակներից, որոնց մասին իւր տեղը խօսք կլինի, ոչինչ մի հեղինակութիւն չէ նուիրած հայ գրականութեանը, վասն զի գրականական պարագմանց համար ժամանակ չէ ունեցած:

Դ.

ՆԵՐՍԷՍ ԱՐԵՂԱՅ ԱՇՏԱՐԱԿՑԻ

Ինչպէս վերևը ասուեցաւ, Աշտարակցի Տէր Յարութիւնի որդի Թորոսը, 13 տարի Եջմիածնի դպրոցի մէջ ուսումն առնելուց յետոյ,

իւր քսան տարեկան հասակում, այն է 1791 թուին, իւր կնքահայր Ներսիսեան Գալուստ եպիսկոպոսի ձեռքով Ս. Իջման տաճարում ձեռնադրվում է աւագ սարկաւազ և, համաձայն սովորութեան, Թորոս անունը թողնելով, վերակոչվում է Ներսէս: Պատմում են, որ Ներսէս կոչելու ցանկութիւնը յայտնած է կնքահայր Գալուստ եպիսկոպոսը, որի հօր անունը նմանապէս եղած է Ներսէս: Պատմում են դարձեալ, որ Ներսիսի դասընկեր նշանաւոր Ահարոն վարդապետը իւր բարեկամի աւագ սարկաւազութեան տօնախմբութեան առթիւ տասներկու տուն մի ոտանաւոր է գրել և ընծայել Ներսիսին, այս գրուածքը թէև մենք չկարողացանք ձեռք բերել, բայց որոնց միայն պատահել է կարգաւ, վկայում են որ Ահարոնը, իւր բանահիտութեան մէջ գովելով Ներսիսի ձիրքը և ուսումն, խնդրում է Հոգւոյն Սրբոյ շնորհքը, որպէս զև նա ևս նմանի մեծին Ներսիսի Պարթևին և հետևի նորա հայրենասիրութեանը և պայծառացնէ ազգային Սուրբ Աթոռը և այլն և այլն: Գրուածքի վերջում հեղինակը «Ներսէս» անուանը նշանակութիւն է տալիս սիրոյ, զի Ներսէս, գրում է նա, ասել է ընա է սէրս:

Ներսիսի պաշտպան Գալուստ եպիսկոպոսը այնուհետև երկար չէ ապրում, իսկ նորա վախճանից յետոյ Ղուկաս կաթողիկոսը Ներսիսին նշանակում է այն ժամանակուայ երևելի նամակագիր և կոնդակագիր Թադէոս արքեպիսկոպոսի մօտ, իբրև կոնդակներ գաղափարող: Յայտնի է, որ կոնդակներ և հրովարտակներ գրելու արհեստը ամբողջ հին աշխարհում շատ յարգի է եղած և մի առանձին թէ գիտութիւն և թէ տաղանդ է եղել պահանջում, մանաւանդ որ ծաղկազրութեան և զարդարանքների համար փոքրի շատէ նկարչի ճաշակ և գիտութիւն էլ ունենալու էր: Վերոյիշեալ Թադէոս եպիսկոպոսը այդ մասին նշանաւոր էր և միանգամայն շատ պիտանի էջմիածնայ հայրապետներին. կոնդակագրի պաշտօն վարած էր նա Յակոբ, Սիմէօն և Ղուկաս կաթողիկոսների ժամանակ, և ինչպէս այն ժամանակուայ կոնդակների լեզուից երևում է, բաւական տեղեակ էր հայկաբանութեան: Եւ որովհետև այդ միջոցում մեր երկիրներում թուղթը հազուադիւտ էր և թանդագին, վասնորոյ աշխատում էին որ կոնդակագրութեամբ պարագողները մանր և յստակ ձեռագիր ունենային, անսխալ արտագրելու շնորհք և որ զլիւսաւորն է խորհրդապահ լինէին: Ահարոն վարդապետի վկայութեամբ Ներսէսը այս երեք յարմարութիւններն էլ ունեցել է:

1793 թուին Գանիէլ եպիսկոպոսը (որ յետոյ կաթողիկոս եղաւ) նշանակուեց առաջնորդ Զմիւռնիոյ վիճակին և միանգամայն կաթողիկոսական նուիրակ. ¹⁷⁾ սա, տեսնելով Ներսիսի աչքաբացութիւնը և աշխոյժը, խնդրեց Ղուկաս կաթողիկոսին որ իրաւունք տայ հետը տանելու այդ աւագ սարկաւազին որպէս զբաղիր և նուիրակութեան հաշուապահ: Այդ հրամանը ստանալով Ներսէսը յիշեալ եպիսկոպոսի հետ հասաւ Զմիւռնիա: Այս քաղաքում 1794 թուի սեպտեմբերի 24-ին Գանիէլ ձեռքով Ներսէսը արեղայ ձեռնադրուեցաւ և առաքուեցաւ նուիրակութեամբ Ելլադա, Մօլդաւիա և Վալաքիա, ուր և մնաց մօտ երեք տարի: Այդ միջոցում Զմիւռնիացոց և Գանիէլ առաջնորդի մէջ մի խռովութիւն է ծագում և այն աստիճանի զրդուում, որ Գանիէլը ստիպուած է լինում հեռանալ, զնալ Պօլիս գործին մի այլ ընթացք տալու համար: Այ Ղուկաս կաթողիկոսի հաշտութիւն քարոզող կոնդակները և ոչ Պօլսոյ Զաքարիայ պատրիարքի միջնորդութիւնը — չեն կարողանում հաշտացնել Զմիւռնիացոց Գանիէլին հետ: Այն ժամանակ կաթողիկոսը ուղարկում է Պօլիս Կեսարացի Մարտիրոս եպիսկոպոսին (որ յետոյ Կարբեցու տեղապահ և կանդիտատ էր համարվում) և գրում Զաքարիա պատրիարքին, որ սա վերջին անգամ փորձէ հաշտեցնել Զմիւռնիացոց Գանիէլին հետ և եթէ դարձեալ չը յաջողի, այն ժամանակ Մարտիրոս եպիսկոպոսին ուղարկել Զմիւռնիոյ առաջնորդ, իսկ Գանիէլին Բուժէլի նուիրակութեան պաշտօնով:

Այս անգամ էլ խաղաղութիւն չեղաւ և 1797 թուի փետրուարի 1-ին ¹⁸⁾ Գանիէլը ճանապարհ ընկաւ դէպի Բուժէլիա, ուր մի տարուանից աւելի մնալով, վերադառնում է Պօլիս կամենալով այստեղեց Էջմիածին գնալ. սակայն որովհետև այդ ժամանակ Զաքարիա պատրիարքը ծանր հիւանդ և մերձ ի մահ էր, վասնորոյ ամիրաներից շատերը թոյլ չը տուին Գանիէլին Էջմիածին գնալու և պահեցին Պօլսոյ մէջ. 1799 թուի մարտի 11-ին վախճանեցաւ Զա

¹⁷⁾ Աւետիս Պէրպէրեանի «Պատմութիւն Հայոց» գրքի մէջ, որ տպագրուած է Պօլիս 1871 թուին, ասած է որ իբր թէ Գանիէլի Զմիւռնիա գնալը եղած է 1796 թուին:

¹⁸⁾ Նոյն Պէրպէրեանի խօսքով 1797 թուի փետրուարի 1-ին Գանիէլը ոչ թէ Բուժէլիա է գնում, այլ Զմիւռնիայից Պօլիս է վերադառնում: Պէրպէրեանի այս երկու տեղեկութիւններն էլ անցքերի ժամանակագրութեան հետ չեն յարմարվում:

քարիա պատրիարքը և նոյն ամսի կէսին (15-ին) Դանիէլը Պօլսոյ պատրիարք ընտրուեցաւ:

Այս վեց տարուայ միջոցում Ներսիսի կենաց մասին հետևեալ տեղեկութիւններն ունինք իւր ծառայական ցուցակից առած՝ շի 20 « ամի հասակի իւրոյ, այսինքն Ներսիսի, ընկալեալ է զաստիճան ա- « ւագ սարկաւագութեան յաթոռն Արարատեան և ի 23 ամի զսր- « բազան կարգ քահանայութեան և արեղայութեան ի Զմիւռնիայ « քաղաքի յամի 1794 յամսեանն սեպտեմբերի 24. և յաւուրց « անտի մինչև ցայսօր ժամանակի հրատարակեալ գտանի ի մասին « հոգևորական պարտաւորութեան իւրոյ շնորհօք Աստուծոյ բարեօք « վայելչութեամբ և ի մէջ իւրոյն աստիճանակցաց իւրաքանչիւր « աստիճանի հոգևորականութեան իւրում բաւական զերազանցու- « թեամբ: Այլ և ի մէջ հոգևորական կառավարութեանց գտա- « նեցեալ է երկու ամ և կէս ի Զմիւռնիայ քաղաքի և երեք ամ ի « կողմանս Ելլադայ, Վալաքիոյ և Մօլտավիոյ, և կէս ամ ի Կ. Պօլիս « Վիզար (տեղապահ) ձեռնադրողին զինքն երանելի Դանիէլ կաթո- « ղեկոսի ի լինելն նորա վիճակաւոր արքեպիսկոպոս կամ անուանեալ « պատրիարք կողմանցն այնոցիկ... »:

Համեմատ մեր ասածին, եթէ 1793 թուին Ներսէսը Դա- նիէլի հետ հասած է Պօլիս, 1794 թուի սեպտեմբերի 24-ին՝ ըն- դունած է նորանից Զմիւռնիայում արեղայութիւն, այն ժամանակ յիշեալ ցուցակի խօսքով 1795 և 1796ը Ներսէսը անց է կացրած Զմիւռնիա քաղաքում, իսկ 1797, 1798 և 1799 թուականները Մօլտավիոյ, Վալաքիոյ կողմերը նուիրակութեամբ: Պէտք է կարծել որ Ներսէսը վերադարձել է Պօլիս 1799 թուի կէսին, Դանիէլի պատ- րիարք ընտրուելու լուրը լսելուց յետոյ, թէև շատ կարելի է որ երի- տասարդ արեղան եկած լինի Պօլիս գեւ նորա պատրիարքութիւնից առաջ, երբ Դանիէլը պատրաստվում էր Էջմիածին վերադառնալու:

Դանիէլի պատրիարքութեան հետ սկսվում է Ներսիսի քաղա- քական կենսւքը և այսօրուանից նորա ամեն մէկ քայլը իւր պատմաւ- թիւնն ունի հազարումէկ գրաւոր վկայութիւններով հաստատուած: Իւր մանկութիւնը և պատանեկութիւնը 18րորդ դարու վերջերում անցկացնելով, Ներսէսը հէնց 1800 թուականի սկզբից մի նոր և բարձրակողմանի և միանգամայն նշանաւոր կենսւք է սկսում, որի տե- սութիւնը ներկայ յօդուածիս նպատակից զուրս է:

Նկր. 3

«Ազգային գրադարան»

NL0127097

Նկր. 2

«Ազգային գրադարան»

NL0127098

Նկր. 1

«Ազգային գրադարան»

NL0123827

